ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Արարատի մարզի Դաշտաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «**հանրահաշիվ և երկրաչաթություն**» / **9 դասաժամ** / առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողություններին ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև -1)

1. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
2. Անձնագրի պատճեն,
3. Ինքնակենսագրություն (Ձև -4)
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները դրանց առկայության դեպքում
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի ,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. սեպտեմբերի 5 -ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից : Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղ կունենա 2022թ. հոկտեմբերի 24 -ին, ժամը 15^{00} - ին «Արարատի մարզի Դաշտաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ գ. Դաշտաքար 2-րդ փողոց 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 00 25 86 հեռախոսահամարով:

Տնօրեն՝ Վ. Ղիմոյան